Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 27.05.2022 թվականի որոշման
Գործում է 10.06.2022 թվականից

ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի “ԱՀ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման” ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

1.	**Վարկի պայմաններ**	
1.1	Վարկառուի եկամուտներ	Ընդունելի է և առաջնային, և երկրորդային եկամուտը
1.2	Արժույթ	ՀՀ դրամ
1.3	Տարեկան անվանական տոկոսադրույք	15% ՀՀ դրամ, որի 7.5- 10.5%-ը սուբսիդավորվում է ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամի կողմից
1.4	Տարեկան փաստացի տոկոսադրույք	4.7% – 8.9%
1.5	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	• Ավանդային և բանկային հաշվիվներում առկա դրամական միջոցների մինչև 100%-ի չափով • Անշարժ գույքի դեպքում՝ մինչև 70%-ի չափով, • Ապրանքանյութական պաշարների դեպքում՝ մինչև 30%, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 30%, • Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության իրավունքի գրավադրման դեպքում՝ վարձակալության իրավունքի արժեքի 60% • Շարժական գույքի դեպքում՝ մինչև 50%-ի չափով, • Դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավելի, քան բանկային հաշիվներով իրականացվող վերջին 12 ամիսների միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 50 տոկոսի չափով: Տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 80%: Միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում՝ վերջին 6 ամսվա կտրվածքով:
1.6	Ժամկետ	• Հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով՝12-ից 60 ամիս, պայմանով, որ շրջանառու միջոցները չպետք է գերազանցեն վարկի գումարի 30 % • Շրջանառու միջոցների համալրման նպատակով՝ 12-ից 24 ամիս
1.8	Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ	վարկի գումարի ամենամասյա հավասարաչափ մարում կամ անուիտետային և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում
1.9	Վարկի գումարի մարման արտոնյալ ժամկետ	1-ից 12 ամիս, պտղատու և խաղողի այգիների հիմնման դեպքում՝ 1-36 ամիս
1.9	Վարկի գումար	Ցորենի մշակության նպատակով –1,000,000-7,000 000 ՀՀ դրամ Գյուղատնտեսության այլ ճյուղերի վարկավորման նպատակով՝ 1,000,000-15,000,000 ՀՀ դրամ Գյուղատնտեսական մթերքների մթերման, վերամշակման և մթերման կենտրոնների ստեղծման նպատակով՝ 1,000,000-5,000,000 ՀՀ դրամ
1.10	Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, փուլային, կանխիկ, անկանխիկ
1.11	Վարկի վաղաժամկետ մարում	Թույլատրվում է, Տույժեր և տուգանքներ չկան

1.12	Գործողության տարածք	ԼՂՀ
2.	**Բանկի միջնորդավճարներ**	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար	10,000 ՀՀ դրամ
2.2	Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար	Պայմանագրի գումարի 0,5%, նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ
2.3	Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	Համաձայն հաշվից միջոցների կանխիկացման Բանկում գործող սակագների
3.	**Ապահովվածություն**	
3.1	Գրավի առարկա	Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, երաշխիքներ և երաշխավորություններ, արժեթղթերի գրավ, բաժնետոմսի գրավ, բաժնեմասի գրավ, փայի գրավ, դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), շրջանառու միջոցներ, իրավունքի գրավ, խառը գրավ և Բանկի կողմից ընդունելի այլ գրավ:
3.2	Լրացուցիչ պայման	Բնակելի նշանակության անշարժ գույքի գրավադրման ժամանակ Գրավատուն ներկայացնում է սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե դրանք Գրավատուին են փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, ապա. 1. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի երաշխավորություն, ընդ որում տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 50%-ը, կամ 2. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ երրորդ անձի երաշխավորություն, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 25%-ը: * սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է:
4.	**Գրավի գնահատում և ապահովագրություն**	
4.1	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից: Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:
4.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
5.	**Գրավի գնահատում և ապահովագրություն**	
5.1	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից: Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:
5.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
6.	**Վարկառուին ներկայացվող պահանջներ**	
6.1	Վարկառու	18 տարին լրացած ՀՀ և ԼՂՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձ՝ անհատ գյուղացիներ
6.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 36 օր (եթե Վարկառուի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով).
7.	**Երաշխավորի նկատմամբ պահանջներ**	
7.1	Երաշխավոր	ՀՀ-ում կամ ԼՂՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ

7.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	• Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 36 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով):
8.	**Լրացուցիչ պայմաններ**	
8.1	Դիմում-հայտի մերժումը	• Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր: • ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստր և/կամ «ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը ունի բացասական վարկային պատմություն: • Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ: • Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը: • չի հիմնավորվում վարկի ստացման անհրաժեշտությունը
8.2	***Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում***	• ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,13% չափով,*** • ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝*** ***1) Տույժ/տուգանքներ*** ***2) Տոկոսագումարներ*** ***3) Մայր գումար*** • ***Վարկը/Վարկային գիծը Պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի մարումը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով***
		Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն
		Գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում իրացումից ստացված գումարի հաշվին գրավով ապահովված պահանջն ամբողջությամբ չբավարարվելու դեպքում տարբերությունը բռնագանձել վարկառուի այլ գույքից:

<u>Լրացուցիչ տեղեկատվություն</u>

Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ
Վարկավորման ոլորտները	Անասնապահություն • խոշոր և մանր եղջերավոր անասունների ձեռք բերում և բուծում • խոզաբուծություն • ձկնաբուծություն • թռչնաբուծություն • մեղվաբուծություն Բուսաբուծություն • ջերմոցային տնտեսության հիմնում և վերանորոգում

	• հացահատիկային և այլ կուլտուրաների մշակություն • պտղատու այգիների հիմնում • խաղողագործություն • գինեգործություն • սնկի արտադրություն Սառնարանային տնտեսության հիմնում Ոռոգման համակարգերի կառուցում Գյուղատնտեսական մթերքների մթերում կամ վերամշակում Գյուղատնտեսական մթերքների մթերման կենտրոնների ստեղծում Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում (առավելագույնը 5 տարվա վաղեմության գյուղատնտեսական տեխնիկա) Գյուղատնտեսական գործիքների ձեռքբերում
Հաճախորդի այլ ծախսեր	✓ *Գրավի գնահատման հետ կապված ծախսեր՝ 12,000-35,000 ՀՀ դրամ կախված գույքի մակերեսից և նշանակությունից (համաձայն Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների կողմից սահմանված սակագների)* ✓ *Նոտարական ձևակերպման հետ կապված ծախսեր՝ 13,000 – 20,000 ՀՀ դրամ* ✓ *Կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր՝ 36,000 ՀՀ դրամ (կախված մակերեսից, տարածքի նշանակությունից և գտնվելու վայրից կարող է սահմանվել այլ սակագին)*
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	15 աշխատանքային օր
Վարկի ձևակերպման վայր	ԼՂՀ տարածքի բոլոր մասնաճյուղերում

Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր

- ✓ անձնագիր
- ✓ սոցիալական քարտ կամ հանարային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից,
- ✓ ամուսնության վկայականը, եթե այդպիսին կա
- ✓ երեխաների ծննդյան վկայականներ, եթե այդպիսիք կան,
- ✓ ընտանիքի անդամների անձնագրերի, սոց. քարտերի պատճեններ
- ✓ տեղեկանք բնակության վայրից փաստացի բնակվող անձանց վերաբերյալ
- ✓ Եկամուտների մասին տեղեկանք հիմնական գործատուի կողմից, եթե այդպիսին կա
- ✓ Աշխատանքային գրքույկի պատճենը, եթե այդպիսին կա
- ✓ Աշխատանքային պայմանագրի պատճենը, եթե այդպիսին կա
- ✓ Արտադրանքի իրացման հետ կապված պայմանագրեր, ստացականներ՝ եթե այդպիսիք կան
- ✓ Ներդրումային ծրագիր
- ✓ Գործարար ծրագիր (անհրաժեշտության դեպքում)
- ✓ Լուսանկարներ ծավալվող գործունեության վերաբերյալ
- ✓ Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականության վկայականներ
- ✓ Հողի հարկի և ոռոգման ջրի պարտքերի բացակայության վերաբերյալ տեղեկանք (անհրաժեշտության դեպքում)
- ✓ Առկա գյուղատնտեսական տեխնիկայի, մեքենա-սարքավորումների և այլ շարժական գույքի անձնագրեր և/կամ սեփականության իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր
- ✓ Տեղեկանք գյուղապետարանից/քաղաքապետարանից սեփականության իրավունքով հաճախորդին պատկանող շրջանառու և հիմնական միջոցների /հողատարածքներ, շինություններ, անասնագլխաքանակ, այգիներ և այլն/ վերաբերյալ
- ✓ Եկամուտները հիմնավորող այլ փաստաթղթեր
- ✓ Գործող և վերջին մեկ տարվա վարկերի գծով վարկային և գրավի պայմանագրերի պատճեններ, վարկային հաշվի քաղվածքներ
- ✓ Սեփականության իրավունքի գրանցման վկայական.
- ✓ Անշարժ գույքի ձեռքբերման հիմքերը (պայմանագիր, որոշում կամ այլ փաստաթղթեր), անհրաժեշտության դեպքում
- ✓ Գրավադրվող գույքի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների մասին միասնական տեղեկանք (ներկայացվում է վարկի տրամադրման դրական որոշման դեպքում).

- ✓ Համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման ակտ.
- ✓ Այլ գույքի գրավադրման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով գործարքը կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթեր
- ✓ Համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման ակտ
- ✓ Գրավադրվող գույքի սեփականատերերի (ամուսնու՝ առկայության դեպքում նաև ամուսնու) անձնագրերի և սոցիալական ապահովության քարտերի, ամուսնության վկայականների պատճեններ
- ✓ այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

Տեղեկացնում ենք, որ

- եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից,
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ,
- Հաղորդակցումն իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով,
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին,
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ,
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

ԵՐԱՇԽԱՎՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին,
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագների:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ

Տոկոսագումարի հաշվարկման օրինակ.

- վարկի սկզբնական գումար –7,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 60 ամիս
- տարեկան տոկոսադրույք – 4.5% (15%, որից 10.5% սուբսիդավորում)
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ - անուիտետային

Առաջին ամսվա մարման մեծությունը կկազմի 130,501.1 ՀՀ դրամ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև

(կիրառվում է մինչև 2 000 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով վարկերի դեպքում)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A – տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.

n - վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.

N - վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

Kn- վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.

Dn- վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կարող եք օգտվել Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվակման հաշվիչից http://www.armbusinessbank.am/am/page/Crediting հղումով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

- վարկի սահմանաչափ -2,000,000 ՀՀ դրամ
- ժամկետ - 60 ամիս
- տարեկան տոկոսադրույք – 4.5% (15%, որից 10.5% սուբսիդավորում)
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար – 10,000 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար -15,000 ՀՀ դրամ
- Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար- 0,3%
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ-անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 5,26 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսացել հետևյալ փոխարժեքները՝ USD՝ 476.1, 30.08.2019թ դրությամբ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան սպառողական վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի»:

ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵՋ, ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

՞Ձեր ֆինանսական տեղեկատուն՞՞ համակարգին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.fininfo.am:

՞՞ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ՞՞ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկի վերաբերյալ տվյալներ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: